

ԻՆՆԵՐՈՒԹԻՒՆ

Տարեկան գին 10 ռուբլի, քսն տարվան 6 ռուբլի
Առանձին Համարները 3 կոպեկով

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւոտեան 10—2 ժամ
(Կաղե կերակի և աստորիկի)

Հայաստանի ընդունված է ամեն լեզուով

Հայաստանի լեզուների համար վճարում են
խրաբանների բաժին 2 կոպեկ

Ինքնիշխան գրքում են միայն խմբագրատուն մէջ
(Չտարբարացրել զիմով են ուղակի
Կապույտ. Редакція, Мукаго)

Կ ՊՕԼՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

II

Երբ «Մշակի» խմբագիրը հրատարակեց առաջադիմութիւնները, ձեռք մտնելով նոյն գործին Հայաստանի մէջ լըջ ստիւնու համար, նախ քան մի տպագրական խօսք ասելը, խմբագրութիւնը դիմեց մասնաւոր յարաբերութիւններին, որոնցով կարողանար ճիշդ հասկացողութիւն կազմել և կատարել ծանօթութիւն ունենալ այդ ընկերութիւններից իւրաքանչիւրի, ինչպէս և նոյն մէջ մասնակցողների և տրնորինողների հետ: Կանխօրէն արդէն նոյն հետ, որչափ հար էր, խմբագրութիւնը հաստատեց այն եղբայրակցութեան թէ թէպէտ իւրաքանչիւրը նոյննից զանաւոր է այնպիսի մի հեղինակաւոր մարդու ուղղակի կամ անուղղակի հովանաւորութեան ներքոյ, ինչպէս ամբողջ հայ տղայից յարգված Ներսէս պատրիարքն է, սակայն ոչ միւր ընկերութիւններից չէ գտնուում այն ճանապարհի վրա, որի վրա կանգնած են եղել Տեղ լինացոյ, պալիանների և Տրեյց մէջ հաստատված աղային և կրօնական ընկերութիւնները: Հատկապէս անհրաժեշտ էր, որ իւրաքանչիւրը ընկերութիւններից, զանաւորով այնպիսի կամայականութեան աշխատանք, ինչպէս խմբագրութեան աշխատանք, կերպարանը, հանդիսաւոր դիրքը, հաստատութիւն և յարաբերութեան պայմանական սահմաններ, ինչպէս ունի այդ մասամբ Կ. Պոլսի հայոց աղային ժողովը: Այնպէս որ որչափ էլ պարզեցնայ և խորհուրդայն այսօր որը ուղղում է այդ ընկերութիւններից, գործնաւոր ժողովը է փոփոխութեամբ ասել

թէ փաղը որ և իցէ մի վեղերի քէֆը ուզած բոլեւն, եթէ չը լինի Ներսէս պատրիարքի նման մէկի ձեռքը, չի գաղարեցնի իր գործունէութիւնը հէնց առաջին համարված ընկերութիւնը: Այդ է պատճառը, որ երբ «Մշակի» խմբագրութիւնը որոշեց պրոպագանդա անել առաջահայերի մէջ «Երաւտեան ընկերութեան» համար, նա դառնեց թէ որովհետեւ «Երաւտեան ընկերութեան» մէջ տնօրինողները բաղկանում են աւելի թաքմ և եռանդուն անձինքներից, փաստորդ եթէ սկսել ուժգին կերպով նրա պատեղ այդ ընկերութեանը առաջահայերի օգնութեամբ, գուցէ կարելի կը լինի այնչափ նիւթական և բարոյական կարողութիւն տալ նորան, որ մնացած, աւելի տարտամ գործող ընկերութիւնները, ստիպված կը լինեն մի օր միանալ նորա հետ և տալ իրանց միութեան այն անխախտ դիրքը և հաստատուն ու յարաբերութիւնը, որ պէտք է ունենայ աղային համակրութեան կարօտ մի ընկերութիւն: Խմբագրութիւնը նաև կարծում էր, որ այդպիսի միացած ընկերութիւն կարելի կը լինէր դնել հէնց ուղղակի հայոց դատին երաշխաւոր մեծ պետութիւնների հովանաւորութեան ներքոյ, որով օտոմանան տէրութիւնը չը կարողանար մի օր տիրապետել ընկերութեան գրամարկըր զանազան գէպքերից օգուտ բաղկով:

Մինչդեռ մինչև այդ տեղնալի միութեան կայանալը, առաջահայերը հէնց իրանք սկսեցին այս տեղ այն տեղ քշել թէ Կ. Պոլսի ընկերութիւնների վրա չեն կարող մեծ փոփոխութիւն կապել, երբ նորա չեն հիմնված մի ամբողջ քաղք վրա և այն: Այնպէս ժողովրդի այդ տրամադրութիւնը «Մշակի» խմբագրութիւնը անմիջապէս սկսեց մասնաւոր յարաբերութիւնների մասին բոլոր ընկերութիւնների հետ և համոզել նոյն, որ եթէ կարելի է, շուտով միանան և մի բարձր ու հաստատաւոր թիրմայի տակ դնեն իրանց ընդ-

հանուր գործունէութիւնը, որով կարող կը լինեն շատ աւելի շահութեամբ համակրութեամբ և նպաստով, քան թէ մինչև հիմայ: Այդ տեսակ առաջարկութեան Կ. Պոլսի ընկերութիւնները շուտով յայտարարեցին, նմանապէս մասնաւոր կերպով, թէ նորա հաւանում են «Մշակի» տուած խորհուրդը, փաստորդ շուտով կիրաւորեն նորա միտքը:

Հէնց այդ միջոցին էր որ մէկ էլ տեսնեց որ մի ընկերութիւն հրապարակ եկաւ հայկական միութեան վերնագրով: Ուրախանալով կարծեցինք թէ դա «Մշակի» խմբագրութիւնն է, որի հէնց այն միութիւնն է, որի վրա խօսք կար, բայց, աւագ երեւաց որ դա մի ուրիշ նոր ընկերութիւն է, որը ոչինչ կապ չունի ընդհանուր միութեան հետ, թէպէտ կրում է նորա կեղծ վերնագրը: Այնուհետ հասկանալի է, որ «Մշակի» խմբագրութիւնը չը համակրեց այդպիսի մի անուանական միաբանութեան, այլ դատելով նորան ևս մնացած ընկերութիւնների շարքում, «Մշակը» իրաւացի կերպով անուանեց նորան միայն կապութեան արդիւնք և միւս ընկերութիւնների պատճէն: Մինչ այս մինչ այն, վրա հասաւ Հայաստանի սուր և ընկերութիւնների միանալու հարցը մնաց առ ժամանակ զանցաւորութեան մէջ:

Այս հանգամանքների մէջ դուրս եկան նորերում մի քանիսները, որոնք ներշնչվելով երեւի մի խեղ ծրարութեամբ հաստատութիւններից, սկսեցին յարձակվել «Մշակի» վրա և կնքել նորան ամեն տեսակ անպատշաճ խօսքերով թէ ինչու այդ լրագիրը չը համակրեց վերոյիշեալ հայկական միաբանութեան, որը պիտի լինի այս պիտի լինի այն և երկրորդ աստիճանի վեր ընկնելով միանգամայն պիտի վառէ բոլոր հայոց երկինքը լուսաւորութեան լուսով...

Այս յիշատի, ուրիշ բան կը լինէր եթէ հայկական միաբանութիւնը ասելով հասկացվէր այնպիսի մի հիմնարկութիւն, որը կա-

րողանար իսկապէս ներկայացնել բոլոր ընկերութիւնների միաբանութիւնը, որը ունենար ուրիշ, աւելի հաստատ հիմունք, քան թէ իւրաքանչիւրը մնացած ընկերութիւններից, ունենար այնպիսի մի դիրք և կազմակերպութիւն, որը զանազանվէր միւս ընկերութիւնների խախտում և փորձում դիրքից, որի անուան համապատասխանէր այնպիսի մի գործունէութիւն, որի մէջ ամբողջական լինէր ընդհանուր աղային միութեան ու միաբանութեան գաղափարը, այլ ոչ թէ նա զանազանվէր մնացած ընկերութիւններից լոկ մի փարթամ վերնագրով, լոկ մի դարձու և փքած անունով: Եթէ փարթամ վերնագրով բան առաջանար, շատ հեշտ կը լինէր մեծ բաներ լինել հիմնելով օրինակ ընկերութիւններ այնպիսի անուններով՝ «հայկական գորշակ», «հայկական յաղթութիւն», «հայկական ազատութիւն», և այլն, դնելով այդ բոլորն էլ Ներսէս պատրիարքի հովանաւորութեան ներքոյ: Մինչդեռ դարձու բառերով ոչինչ չի դուրս գալ փաստ որոյ և «Մշակը» չը յարաբերվեց հայկական միաբանութիւնը ասված ընկերութեան ճոխ վերնագրով, որի համար թէթեամբ ինքնահաւանները չը ուշացան մեղադրել նորան անհասկացողութեան մէջ... Ինչու ասեն ուրիշները թէ ո՞վ է այս հարցի մէջ աւելի տպաւորաւոր և աւելի չը հասկացողը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱ ԱՆԷՐԱՆԿԱՊՈՒՆ

23 փետրուար

«Մշակի» ընկերութիւնը փաղոց է որ լուծեն ընդարձակ տեղիութիւն Անթուրապոլից: Բայց եթէ թղթակցեց, կամայով վեր դնել մի երկարատե լուծեան, դարձաւ մի քանի ցուրտ ձեռք, եթէ նա ձգէ մի չլրանաւոր հայեացք իր ձեռքը, նկարագրութեան, ի ծան ինչ անցք, կամ ինչ հետքերով թաքմ լուծիւր նա կարող է հաղորդել ընկերութիւններին: Այն չը տեսնվա թանգութեան, փառասկանութեան, արեւտների, առաջարկ անենայն գործունէութեան անկում, պարպուլութիւն, չարտութիւն, մարտնչանութիւն, — ասա այն անմիջապէս երկրորդը, որոնք

[illegible]